ԱՂՎԱՆԻՑ ԹԱԴԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ*

Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱՐՅԱՆ

5-րդ դարի սկզբին (428 թ.) Պարսկական պետությունը արևելյան Անդրկովկասում ստեղծում է մի մարզպանություն, որի մեջ մտցնում է Աղվանքը, Ուտիքն ու Արցախը[1]։

Մարզպանական վարչակարգի ստեղծումով վերացվեցին հայ Արշակունյաց և ալբանական (բուն Աղվանքի) միապետական թագավորությունները։ Սակայն նախարարական ներքին կյանքում, ինչպես արդեն նկատվել է պատմագիտության մեջ, սկզբնական շրջանում արտակարգ փոփոխություններ տեղի չունեցան[2]։ Եղիշեի վկայությամբ՝ Արևելյան Հայաստանի Արշակունի թագավորության վերացումից հետո էլ երկրի տեր էին մնում տեղացի նախարարները, որոնցից ամեն մեկն իր նահանգի ինքնակալ իշխանապետն էր, ուներ իր զորքը, ինքնահատուկ ներքին կարգ ու կանոնը և մարզպանի միջոցով միայն հարկ էր տալիս Պարսկաստանին։ Այս մասի վերջին թագավորն էր Արտաշեսը,— գրում է Եղիշեն։— Որ պարսից արքունիքը «ղնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այր ու ձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[3]։

Եվ պատահական չէ, որ մարզպանության շրջանում էլ, Զողում նստած Աղվանից մարզպանի կողքին, վերստին գլուխ էին բարձրացրել աղվանական հին մանր թագավորությունները, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ նախկին ցեղային միավորումները[4]։ Իսկ Ուտիքի և Արցախի Առանշահիկներն էլ ձեռք բերեցին վարչական որոշակի ինքնուրույնություն, ստեղծեցին թագավորություն, որն իր ամենաբուռն վերելքն ապրեց Վաչագան Բարեպաշտի օրերում։

Հինգերորդ դ. սկսած՝ հայկական աղբյուրներն Արցախ և Ուտիք նահանգները ևս կոչում են Աղվանք[5]։ Այս վերանվանման մեջ որոշակի դեր պետք է ունենար մարդի եկեղեցին, որը վարչական նոր վիճակի պատճառով առանձնացվել էր, սակայն նվիրապետական տեսակետից ենթակա էր մնում հայոց լուսավորչական եկեղեցուն։

---

* *Հոդվածը տպագրվում է մաքերի փոխանակության կարգով։*

1 *Պատմագիտության մեջ ընդունված է Արցախի և Ուտիքի միացումն Աղվանքին հաշվել 387 թ., երբ Հայաստանը բաժանվեց երկու մասի։ Պատմական աղբյուրների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ հիշյալ նահանգներն Արևելյան Հայաստանի կազմում մնացել են ընդհուպ մինչև Արշակունյաց հարստության վերացումը (428 թ.)։*

2 *Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 286։*

3 *Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 6։*

4 *Նույն տեղում, էջ 74—75։*

5 *Այս առթիվ տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Առաշարան, էջ Ը—Թ։ Նաև՝ Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի դրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 5։*

Մարզի «Աղվանք» (պարսիկների, հետո էլ՝ արաբների կողմից «Առան» կոչված) անունը աստիճանաբար մոռացության տրվեց անդրկուրյան երկրի առումով, որովհետև պարսկական տիրապետության օրոք, ինչպես ասացինք, վերակենդանացել էին նախկին ցեղային միավորումները և բաժան-բաժան երկիրը հենց այս միավորումների անուններով էլ կոչվում էր՝ հյուսիս-արևելյան մասը՝ Մասքթաց կամ Ջողա աշխարհ, կենտրոնական մասը՝ Բաղասական աշխարհ, արևմտյան մասը՝ Լփնիք և այլն։ Իսկ արաբական տիրապետության օրոք այս ամբողջ տարածքի վրա կազմավորվեցին վարչական նոր միավորումներ՝ Դերբենդի, Շիրվանի, Շաքիի ամիրայությունները։

Պարզ է, թե ինչու «Աղվանք» անունով հետագայում կոչվեցին միայն Արցախ և Ուտիք նահանգները, իսկ նրանց տեր Առանշահիկները՝ Աղվանքի (գրաբարում՝ Աղուանից) իշխաններ, թագավորներ։

10-րդ դ. պատմիչ Մովսես Դասխուրանցին, հիմք ընդունելով այս հայաշխարհ Աղվանքի մասին 7-րդ դարում ստեղծված պատմությունը, նրան է միացնում հետագա ժամանակներին վերաբերող նյութեր, ժամանակագրություններ, ինչպես նաև հին դարերից եկող տեղեկություններ ու ավանդություններ։ Նա, իր հայրենիքի պատմությունն առավել հարուստ ու շքեղ ներկայացնելու նպատակով Պատմության մեջ է մտցնում նաև այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերում են բացառապես անդրկուրյան Աղվանքին։ Այս եղանակով կազմվում է նաև Աղվանքի իշխանական-թագավորական տան ծյուղագրությունը, որի մեջ իրար են խառնվում միմյանց հետ կապ չունեցող վարչական միավորումների ու տարբեր տոհմերի ներկայացուցիչները։

Պատմիչը, թվարկելով հայոց ավանդական թագավորներին, գրում է. «Ի սոցա ծննդոց կարգեցաւ Առան նախագահ Աղուանից։ Եւ թիւ ասուրցն յԱռանայ մինչև ցՔաջ Վաչական, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց՝ չէ յայտ։ Իսկ որք ըստ կարգի կային թագաւորք տանս Աղուանից՝ անուանք են այսոքիկ. Վաչական (առաջին), Վաչէ (առաջին), Ուռնայր, Վաչական (երկրորդ), Մրհաւան, Սատոյ, Ասայ, Եսուղեն, Վաչէ (երկրորդ). ապա Բարեպաշտն Վաչական (երրորդ) արքայ Աղուանից»[6]։

Պահպանվել են թագավորացանկի համար նյութ հանդիսացած պատմական հիմնական աղբյուրները, և նրանց հանգամանալից քննությամբ հնարավոր է պարզել, թե ցուցակը ո՞ր չափով է համապատասխանում պատմական իրականությանը։

Այդ քննությանն անցնելուց առաջ ասենք, որ վերոհիշյալ ցուցակի սխալ ելակետից շարժվելով, որոշ գիտնականներ ավելի են շփոթել պատմական իրականության պատկերը։ Օրինակ, ակադեմիկոս Ա. Ե. Կրիմսկին արևելյան Անդրկովկասում հնագույն ժամանակներից մինչև արաբական տիրապետության անկման օրերը հանդես եկած բոլոր թագավորների ու իշխանների միջև ոչ մի տարբերություն չի տեսնում՝ ո՞չ ազգային, և ո՞չ էլ վարչական պատկանելության տեսակետից[7]։

Իսկ Կ. Վ. Տրևերը, տեսնելով, որ հայկական աղբյուրներն իրենց Աղվանքում տիրող իշխանապետական նախնի Առանին համարում են հայ թագավորի

6 Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 51—52։

7 А. Е. Крымский. Страницы из истории Северного или Кавказского Азербайджана (Классическая Албания). Сборник С. Ф. Ольденбургу, Ленинград, 1934, стр. 290. 294—295.

նշանակած կուսակալ, հայտարարում է, թե «Հայաստանի ու Ալբանիայի շահերի մերձեցման նպատակով կարող էր ստեղծվել առասպել հայկական հողերի ավանդական կարգավորիչ Վաղարշակի անմիջական ազդեցությամբ ալբանական թագավորություն կազմելու մասին»[8]։

Ս. Տ. Երեմյանը մի տեղ Առանշահիկներին ու մասքութ-Արշակունիներին նույնացնում է[9], իսկ մի այլ տեղ այս Արշակունյաց տոհմի հիմնադրությունը հաշվում 338 թ.[10]։

Փորձենք քննության առնել վերը մեջ բերված թագավորացանկը։

Ուշագրավ է Մխիթար Այրիվանեցու փորձը այս ցուցակի հիման վրա ներկայացնելու Աղվանից թագավորական տան ճյուղագրությունը։ Սակայն այս պատմիչն էլ իր հերթին մի շարքի վրա է դրել Աղվանից աշխարհի պատմության մեջ կուսակալ (նախագահ), թագավոր, իշխան կոչումներով հանդես եկող անունները, նրանց բոլորին համարել «Թագաւորք Աղուանից», և ստեղծել մի այսպիսի տախտակ. «Առան, Ուռնայր, Վաչական..., Վաչէ, Յաւչագան, Միրհաւան, Սատոյ, Եսաղեն, Միհր, Արմայել, Վորդ, Վարդան, Վարաղման, Վարազ Գրիգոր, Ջուանշէր Քաջ, Վարազ Տրդատ, Վաչագան, Ներսեհ, Գագիկ, Ստեփանոս, Վարազ Տրդատ, Ստեփանոս, Ատրներսեհ, Գրիգոր, Սենեքերիմ, Յովհաննէս Թագ.։ Չայնչափ գտաք՝ երեսուն թուով»[11]։ Այստեղ առաջին ինն անունները շփոթված են, մի բան, որ Այրիվանեցու թարգմանիչ Ք. Պատկանյանը գրչական աղավաղում է համարել[12]։ Սակայն, անկախ դրանից, Այրիվանեցու ցուցակը ես հարցը պարզելուն ոչնչով չի օգնում, քանի որ այստեղ բացակայում է քննական այն հայացքը, որ պիտի պարզեր, թե որտեղի՞ց և ի՞նչ հիմունքով են իրար կողք ընկել այդ անունները։

Ոչ ոք կասկածի չի ենթարկել Աղվանքի թագավորացանկի հավաստիությունը[13]։ Սակայն Վ. Ֆ. Մինորսկին գտնում էր, որ «Թեպետ և թագավորների անունները մտցված են Մովսես Կաղանկատվացու ժամանակագրության մեջ, նրանց մասին տվյալները կցկտուր են ու խառնակ»[14]։ Կասկածի համասար այս վերաբերմունքին ես, դժբախտաբար, չի հետևել ցանկի անունների պատմա-քննական վերլուծությունը։

Հայ մատենագիրներն ու հետազոտող պատմաբանները քննվող ցանկի

---

8 К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, М.—Л., 1959, стр. 145.

9 См. «Очерки истории СССР III—IX вв.», М., 1958, стр. 314.

10 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 88։

11 Մխիթարայ Այրիւանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, Սանկտ-Պետերբուրգ, 1867, էջ 23։

12 Տե՛ս Хронологическая история, составленная отцом Мехитаром вардапетом Айриванским, пер. К. Патканова, СПб., 1861, стр. 348.

13 Բացառություն է կազմում միայն Ն. Ակինյանը, որն աշխատել է ցույց տալ, թե Կաղանկատվացու (կամ Դասխուրանցու) թագավորացանկի անուններից որո՞նք են իրական-պատմական և որո՞նք՝ հորինված։ Սակայն նա էլ չի անդրադարձել այն հարցին, թե այդ իրական-պատմական թագավորներից ու իշխաններից որո՞նք են առնչվում անդրկուրյան Աղվանքի հետ և որո՞նք՝ Հայոց արևելից կողմանց. տե՛ս նրա՝ Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւնն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 80—96, 96—142 և այլն։

14 В. Ф. Минорский, История Ширвана и Дербента X—XI веков. М., 1963, стр. 29.

անունները կրողներին միշտ էլ համարել են Աղվանքի թագավորներ, իսկ ոչ հայ կովկասագետները՝ ալբանական թագավորներ։

Բայց հետաքրքիրն այն է, որ այս դեպքում ուսումնասիրողները, ցանկի հավանական ու անհավանական թագավորներին և նրանց շուրջն ստեղծված պատմություններն ընդունելով պատմական ճշմարտության տեղ, միաժամանակ մոռանում են հենց այդ անուն-թագավորների ազգագրական բնութագրումները, որ պահպանվել են Աղվանից աշխարհի պատմության մեջ։ Եվ դա այն ժամանակ, երբ հենց այս բնութագրումներն են, որ հաստատվում են ուրիշ աղբյուրներով։

Աղվանից թագավորական տան պատմականորեն իրական պատկերը որոշելու նպատակով անհրաժեշտ է ցուցակը քննել օգտագործված աղբյուրների տեղեկություններով։ Իսկ այդպիսի փորձ մինչև օրս չի արվել։

Այս քննությունն առավել ևս անհրաժեշտ է, քանի որ հենց ինքը՝ «Աղվանից աշխարհի պատմության» շարահարողն իր գրքում քանիցս խոստովանում է, որ այս ցուցակի թագավորների մասին իր գրածից ավելի ո՞չ ինքը տեղեկություն ուներ, ո՞չ էլ կարողացավ այդպիսիք գտնել հին աղբյուրներում։ «Պատմութիւն ճշմարիտ առաւել քան ղնախադահիլն Առանայ ի Վաղարշակայ տանս Աղուանից այլ ինչ ո՞չ գտաք մինչև ցՔաջն Վաչական, որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»[15],— պարզասրտորեն գրում է պատմիչը։ Կամ՝ «ըստ կարգի զրոյցք յԱռանայ մինչև ցՈւռնայր Աղուանից արքայ և ցՏրդատ Հայոց արքայ ո՞չ գտաք, այլ հարևանցի գրեցաւ, որ ինչ ի պէտս էր տեղեակ լինել»[16]։

Աղվանք աշխարհի միասնական պատմությունը հյուսող պատմիչն ինքն է խոստովանում, որ մի դեպքում պատմական աղբյուր է ընդունում «զԱգաթանգեղոյ Պատմութիւն ցանկալի», մի այլ տեղ՝ «...յայսմ վայրի նպաստաւորէ մեզ քերթողահայրն Մովսէս»։ Իսկ ուրիշ տեղերում էլ առանձին գլուխներ է արտագրում Եղիշեից ու Փավստոս Բուզանդից, առանց նրանց անունները տալու։

Իհարկե, այլ հարց է, թե պատմիչն ինչպես է մեկնաբանում քերթողահայր Մովսեսից ու մյուսներից քաղած տեղեկությունները։ Այդ հարցը պարզելու համար մենք նախ և առաջ պետք է դիմենք իր իսկ վկայակոչած աղբյուրներին։

Հարցի քննությունը պահանջում է, ամենից առաջ, նկատի առնել երկրամասի վարչա-քաղաքական կյանքի երեք փուլերը.

ա) Նախամարզպանական շրջան, երբ իրարից զատ գոյություն ունեին Ալբանիան կամ բուն Աղվանքը՝ իր Արշակունյաց թագավորությամբ և Մեծ Հայքի կազմի մեջ մտնող Ուտիք և Արցախ նահանգները՝ իրենց Առանշահիկ իշխանական տներով։

բ) Մարզպանական շրջան (428 թ. հետո), երբ Ալբանիա-Աղվանքն ու հայկական հիշյալ նահանգները մտնում էին պարսկահպատակ մեկ մարզի մեջ, ընդհանուր առմամբ պարտավոր էին ենթարկվել պարսիկ մարզպանին, սակայն ըստ էության ունեին ներքին ինքնուրույնություններ, և յուրաքանչյուր կողմը յուրովի էր օգտվում ինքնուրույնության այդ հնարավորությունից։

գ) Ծոմարզպանական շրջան, երբ բուն Աղվանքում աստիճանաբար կազ-

15 Կաղանկատուացի, էջ 16։

16 Նույն տեղում, էջ 19։

մավորվում են վարչական նոր միավորումներ, իսկ Արցախում անընդմեջ տիրություն են անում Առանշահիկները, Ուտիք թափանցած Միհրանյան իշխաններն էլ, շուրջ մեկ դար տիրություն անելուց հետո, աստիճանաբար հեռանում են ասպարեզից, իրենց դիրքերը դիջելով նահանգի բնիկ տեր Առանշահիկներին։

Այս պարբերացման հիմունքով էլ քննենք վերոհիշյալ թագավորացանկը։

Սկսենք Առանից՝ ցանկի առաջին անունից։ Այստեղ, ի՞նչ խոսք, որ Աղվանքի պատմիչին «նպաստաւորէ քերթողահայրն Մովսէս» և ուրիշ ոչ ոք։ Իսկ քերթողահայր Մովսեսի Առանը ոչ թե թագավոր է, այլ Մեծ Հայքի թագավոր Վաղարշակի կողմից Հայաստանի հյուսիս-արևելյան մասի (Ուտիք, Արցախ) վրա կարգված կուսակալ[17]։ Ասանից էր, որ սերվեցին այս նահանգների իշխանական տոհմերը, որոնք հետագայում պետք է կոչվեին Առանշահիկներ։

Խորենացու այս տեղեկությունն Առանի մասին վերաբերում է մ. թ. ա. երկրորդ դարին, երբ Մեծ Հայքի միասնական պետության ներքին կարգ ու կանոնի նախանձախնդիր Վաղարշակ թագավորն աշխատում էր իր երկրի ծայրամասերն ամրապնդել նախարարական տների իշխանությամբ։

Ցուցակի երկրորդ անունը Քաջ Վաչագանն է, «որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»[18], և «որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց»[19]։ Պատմիչ-շարահարողն Առանից մինչև Քաջ Վաչագանը եղածներից տեղեկություն չունի։ Չի էլ ասում, թե վերջինիս մասին այս երկու շատ կարևոր տեղեկությունը որտեղի՞ց է քաղել։ Սակայն հենց միայն այս տեղեկությունները բավական են՝ որոշելու համար, որ Վաչագան Քաջը ըստ Աղվանքի այն առաջին թագավորն էր, պարթև Արշակունիների մի շառավիղը, որ մ. թ. առաջին դարում ազվանական ցեղախմբերը միավորեց ու ստեղծեց միասնական թագավորություն («միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»)։

Մյուս անունը, որ դարձյալ վերցված է նախորդ շրջանի մատենագիրներից, և որի մասին եղած տեղեկությունները կարող ենք ի մի բերել ու քննել, Ուռնայրն է։

Խորենացուն[20] և Բուզանդին[21] հայտնի Ուռնայրն անդրկուրյան Աղվանքի թագավորն էր և չէր կարող պատկանել Աղվանքի կամ Ուտիքի ու Արցախի իշխանական տունը, քանի որ Ուռնայրի ժամանակ (IV դ.) Ուտիքն ու Արցախը գտնվում էին Մեծ Հայքի թագավորության կազմում։

Հաջորդ անունը Եսվաղենն է կամ Արսվաղենը, նա, որ Մեսրոպ Մաշտոցին օգնեց գիր ու գրություն տարածելու Աղվանքում։

Արսվաղենը, հավանաբար, վերջին ներկայացուցիչն էր ալբանական Արշակունի թագավորական տան, քանի որ նրա մահվանից հետո Աղվանքում այլևս միացյալ թագավորություն չկար։ Եվ, սրանից բացի, Վաչագան Բարեպաշտի օրոք այդ երկիրն այնքան թուլացած էր, որ որոշ առումով կախյալ վիճակում էր գտնվում նույնիսկ Վաչագանի հռչակած Առանշահիկ թագավորությունից։

---

17 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 111—113։

18 Կաղանկատուացի, էջ 16։

19 Նույն տեղում, էջ 51։

20 Խորենացի, էջ 304։

21 Բուզանդ, Պատմություն հայոց, գրք. Ե, գլ. Դ։

Որ Արսվաղենը եղել է Ալբանիա-Աղվանքի թագավորը, պարզ երևում է Կորյունի տեղեկություններից։ Ըստ նրա պատմության՝ Մաշտոցը գնում է Անզրկուրյան Աղվանք. «և հասեալ ի թագաւորական տեղիսն», հանդիպում է թագավոր Արսվաղենի ու եպիսկոպոս Երեմիայի հետ, նրանց գործուն օժանդակությամբ դպրություն տարածում երկրում, հետո իջնում Բաղասական աշխարհը, այնտեղ ևս կատարում իր առաքելությունը։ «Հրաժարէր ապա և ի թագաւորէն և յեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցւոյն Աղուանից», դալիս է Գարդմանք (Ուտիք), ուր նրան դիմավորում է նահանգի իշխան Խուրսը. «Եւ հանդէպ հասեալ գայր Գարգմանական ձորոյն։ Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում անուն Խուրս կոչէին»[22]։

Այսքանից չի կարելի չեզրակացնել, որ Կորյունի հասկացած Աղվանքը Կուրի ձախափնյակն է։ Աջափնյակի՝ Հայոց արևելից կողմանց առաջին գավառը (Գարդմանք) մտնելու համար Մաշտոցը հրաժեշտ պետք է տար Աղվանքի թագավորին, եպիսկոպոսին և «յամենայն եկեղեցւոյն Աղուանից»։ Վերջին արտահայտությունը հստակ որոշում է նաև գործողության ժամանակը՝ նախամարզպանական շրջանը, որովհետև, եթե մարզպանությունից առաջ «ամենայն եկեղեցին Աղուանից» ձախափնյակում էր, ապա մարզպանության օրոք Աղվանից եկեղեցու իրավասության տակ էր մտնում նաև աջափնյակը։

Պարզվեց, որ Արսվաղենն Ալբանիա-Աղվանքի թագավորն է եղել։ Ուրեմն՝ նրա անունը ևս չպետք է մտներ Հայոց արևելից կողմանց տերերի ցանկը։

Թագավորացանկի մյուս անունները՝ Վաչագան երկրորդ, Վաչե առաջին, Մրհավան, Սատոյ, Ասա, անհնար է ստուգել, քանի որ պատմական աղբյուրները լռում են նրանց մասին, իսկ Աղվանից աշխարհի պատմության մեջ նրանք միայն ցանկի բաղադրիչներ են։ Պատմիչը, չհայտնելով, թե որտեղի՞ց է քաղել այդ անունները, խոստովանում է, որ նրանց մասին տեղեկություններ չի գտել ո՞չ հին աղբյուրներում, ո՞չ էլ զրույցներում։

Ընդհանրացնելով վերն ասածները, կարելի է հաստատել, որ Աղվանից թագավորական տան ներկայացուցիչների ցուցակի իրական-պատմական անուններից Առանը իշխանական տան նախահայրն է, այն առաջին մեծը, որից, ըստ Խորենացու, սերվել են Հայոց արևելից կողմանց իշխանական տները. «Ի սորա զաւակաց ասեն սերեալ... Գարդմանացւոց և Ծաւդեացւոց և Գուդարացւոց իշխանութիւնն»[23]։

Այս Առանից է «Առան» անունը, ինչպես նաև այդ աշխարհի՝ նույն նախնուց սերված իշխանական տան «Առանշահիկ» («Առանի տիրակալ») տիտղոսը։

Մեր պատմիչներն այս բոլոր ավանդական տվյալները հաստատուն հիմքի վրա են դնում Առանի ու նրանից սերված Առանշահիկների ազգագրական հատկանիշով. Առանը Սիսակի սերունդներից էր, իսկ Սիսակն էլ սերվում էր Հայկից (Խորենացի, Կաղանկատվացի ու հետագաներ)։ Դասխուրանցու օգտագործած մի կոնկրետ աղբյուրը՝ Ջիվանշիրի ժամանակագիրը (VII դ.) ճանաչում է «զնախնական ազգս Հայկազնեայց զԵռանշահիկս»[24]։ Իսկ Կիրակոս

---

22 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 72։

23 Խորենացի, էջ 113։

24 Կաղանկատուացի, էջ 196։

Դանձակեցին Հայոց արևելից կողմանց տերերին դիտե որպես «ի զարմից Հայկայ՝ յաղդականութենէն Առանայ»։

Թագավորացանկի հաջորդ անունը Վաչեն է։ Նա, որ Վարդանանց ապըստամբությունից հետո ըմբոստացավ պարսից դեմ, երկար ճակատամարտերի վերջում էլ թողեց իր դահը, ձեռքն ավեաարան առավ ու գնաց ապաշխարելու։ Աղվանքի Պատմության շարահարողն այս ամբողջը վերցրել է Եղիշեից, որի մոտ Աղվանքի թագավորն անուն չունի։ Եղիշեից արտագրածին ավելացրել է Վաչե անունը և մեկ էլ նրա եղբոր Հաղկերտ անունը (այս Հաղկերտից, իբր թե, ծնվել է ապագա թագավոր Վաչագանը)։ Պատմիչը չի ասում, թե իրեն որտեղից են հայտնի Վաչե ու Հաղկերտ անունները։

Եվրսես Ակինյանն այն կարծիքն է հայտնել, թե Վաչեի մասին այս ամբողջ պատմությունը հորինված է Հռոմի թագավորի որդու վարքի նմանությամբ, որն ագքատությունն հանձն առնելով, մի ավետարան է վերցնում և առանձնանում Եգիպտոսի անապատում ապաշխարելու։ Պատմությունը հայերեն է թարգմանվել 873-ին, Ատոմավանքի առաջնորդ Գագիկի ձեռքով[26]։ Հետևապես, IX դ. դեռք է մուծված լիներ Եղիշեի Պատմության մեջ, նրանից էլ փոխանցված Աղվանքի պատմությանը։

Մեզ հավանական է թվում Ն. Ակինյանի կարծիքը, մանավանդ երբ կան այդ կարծիքը հաստատող ուրիշ փաստեր էլ, որոնք բանասերը չի նկատել։ Եղիշեի պատմության մեջ անդրկուրյան Աղվանքը ներկայացված է իր բաղկացուցիչ երկրամասերով, և, որ ամենակարևորն է, այս երկրամասերի տերերը կռվում են Վարդանանց դեմ։ Այսպես. Լոփնաս դետի ափին հայոց զորքերը ճակատամարտ են տալիս Բաղասական զորքերի դեմ, նրանց թագավորազուններին ծանր վնասներ են հասցնում հայ զորապետներին[27]։

Թշնամի բանակների մեջ էր Լփինքը, որի թագավորի եղբայր Վուրկին ու շատ զինվորների կոտորում է Արշավիր Արշարունին[28]։

Մասքութներն էլ, ըստ այս պատմության, Վաչեի համար օտարներ էին, որոնց հետ նա պետք է դաշնակցեր պարսից դեմ կռվելու համար։

Այս պայմաններում անդրկուրյան Աղվանքի ո՞ր մասի թագավորն էր Վաչեն։ Ինչպե՞ս է, որ այս երկրի թագավոր կոչվածը թշնամանում է Պարսից դեմ՝ հայոց իշխանների հանդեպ գործադրված տանջանքների համար, իսկ այդ նույն թագավորի երկրի տարբեր մասերը կռվում են հայերի դեմ։

Մի՞թե սա չի խոսում այն մասին, որ Վաչեի թագավորությունը Կուրի ձախափնյակում՝ անհնար ու անտրամաբանական է։

Իսկ աջափնյակի հետ Վաչեին կապում է միայն ավանդությունն այն մասին, թե գահից հրաժարվելուց հետո նա ապաշխարել է Ավետարանոց դյուղում[29]։

---

25 Կ. Դանձակեցի, էջ 193։

26 Ն. Ակինյան, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւն Աղուանից, էջ 89։

27 Եղիշէ, էջ 76։

28 Նույն տեղում, էջ 77։

29 Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 218։ Հեղինակն այստեղ Վաչեի փոխարեն գրում է Վաչագան, սակայն մեջ է բերում Աղվանքի Պատմության՝ Վաչեին վերաբերող հատվածը և Գյուտ կաթողիկոսի թղթերը։

Հաջորդ անունը Վաչագան Բարեպաշտն է[30]։

Բարեբախտաբար Աղվանքի պատմության մեջ է մտել ականատես ժամանակագրի գրածը Վաչագանի մասին։ Եվ թվում է՝ դժվար չէ որոշել, թե Պատմության մեջ նրա գործունեությունը պատմող գլուխների տեղեկություններից որո՞նք են ժամանակագրինը և ի՞նչն է ետնամույծ, որ չի կապվում պատմական ճշմարտության հետ։

Հայտնի է, որ 428 թ. պարսից արքունիքը վերացրել է Արշակունյաց թագավորությունն Արևելյան Հայաստանում։ Կոնկրետ տեղեկությունները բացակայում են, սակայն պետք է ենթադրել, որ միաժամանակ վերացել է նաև ալբանական (մասքթաց) Արշակունիների թագավորությունը։ Սա միակ տրամաբանական ելքն է, որովհետև պարսիկ Սասանյանք Արշակունիների տոհմական հակառակորդներն էին. եթե իրենց հպատակ Հայաստանում վերացրել էին հակառակորդին, չէր կարող պատահել, որ նույնը չանեին նաև հարեվան Ալբանիայում։ Ապա. Աղվանք մարզպանության ստեղծումը համընկնում է այս ժամանակին։ Եթե այդ մարզպանության մեջ էր մտնում նաև Ալբանիան, նշանակում է, այն այլևս չէր կարող ունենալ ինքնուրույն միասնական թագավորություն։

Ժամանակագրի վկայությամբ՝ Վաչագանին թագավոր է ձեռնադրել պարսից Վաղարշ արքան (484—488)[31]։

Պատմաբանները մինչև այսօր էլ անհիմն կերպով Վաչագանին համարում են Ալբանիայի թագավոր, նույնիսկ մասքութ և Արշակունի։ Սակայն ըստ աղբյուրների ընձեռած տեղեկությունների՝ նա Հայոց արևելից կողմանց Առանշահիկ թագավորության հիմնադիրն է։

Վաչագանի թագավորությունը ժամանակով առնչվում է Խորենացու պատմության ստեղծման հետ. իսկ այդ ժամանակից սկսած հայկական աղբյուրները Աղվանք են ճանաչում հիմնականում Երասխի ու Կուրի միջագետքը[32]։ Աղվանքի պատմության հիմքում ևս այս ըմբռնումն է ընկած[33]։

Արցախում էին գտնվում ինչպես Վաչագան Բարեպաշտի կառուցած արքայանիստ Գյուտական գյուղը[34], այնպես էլ ամարանոց Աղվենը[35]։

Պարտավն սկզբնապես կառուցվել էր պարսից մարզպանների համար։ Այդ պատճառով էլ Վաչագանն առնչություն չուներ այդ քաղաքի ու շրջակայքի հետ։ Նրա ամբողջ գործունեությունը ծավալվում է Արցախական աշխարհում, Ուտիքում և անգրկուրյան հինավուրց Կամբեճան գավառում։

Ժամանակագիրն ասում է. «...Ըստ թուոց աւուրց տարուոյն ՅԿեղեցիս

---

30 Ն. Ակինյանը վերոհիշյալ ուսումնասիրության մեջ այն կարծիքն է հայտնել, թե Վաչադանը ևս պատմական անձնավորություն չէ (տե՛ս նշվ. աշխ., էջ 126—127 և այլն)։ Մենք արդեն ցույց ենք տվել, որ այս կարծիքն անհիմն է, և Վաչագանի պատմականությունն ապացուցել ենք աղբյուրների բննությամբ (տե՛ս «Դարձյալ Աղվանի ժողովի գումարման տարեթվի մասին», «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, № 6, էջ 51—60)։

31 Կաղանկատուացի, էջ 55, 57։

32 Խորենացի, էջ 113։

33 Կաղանկատուացի, էջ 14։

34 Նույն տեղում, էջ 150։ Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Բ մաս, էջ 348—349։ Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 230։

35 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 34։

միայն Բարեպաշտն Վաչական շինեաց յԱրևելս»։ Մի ուրիշ տեղ. «Եւ կարգեալ տեղեաց-տեղեաց եպիսկոպոս և հայեցողս ի Կամբեջան, ի յԱղուանս...»։

Եվ, վերջապես, Վաչագանին հպատակ աշխարհը կամ նրա տիրույթը հենց Արցախն էր. «Հրաման տայր (Վաչագանը)... Արցախամուր աշխարհին իւրում ծառայութեանն...»[36]։

Որ Վաչագանի ծառայության տակ հիմնականում միայն Հայոց արևելից կողմանքն էր գտնվում, դա տարդ երևում է նաև նրա կազմակերպած Աղվենք ժողովի մասնակիցների ցուցակից։ Ճիշտ է, մասնակիցների մեջ հոդևորականներ կային «Աղվանից, Լփնաց և Ջողայ» երեք աշխարհներից, սակայն աշխարհիկ տերեր կային միայն Արցախից («աղատ մարդիկ և նահապետք Արցախայ»)[37] և Ուտիքից[38]։

Ասացինք, որ Վաչագանին թագավոր էր ձևնադրել պարսից Վաղարշ արքան։ Պետք է կարծել, որ Վաղարշը նրան լիազորել էր նաև անգրկուրյան դավառների վերահսկողության իրավունքով, քանի որ ժամանակագիրը վկայում է, թե ինչպես Ալրանիայի նախկին թագավոր Արսվաղենի Խոճկորիկ անունով որդին Վաչագանի կողմից կուսակալ էր կարգված Ձախափնյակի Ցրի քաղաքում[41]։ Այս փաստը հիմք է հանդիսանում ենթադրելու, որ համանման կուսակալներ կարգված են եղել նաև Ձախափնյակի մյուս քաղաքներում ու դավառներում։ Ձախափնյակի վրա վերահսկելու այս լիազորությունը հետագայում էլ իրականացնում էր Դարդմանքում նստած Միհրանյանների ամենահզոր ներկայացուցիչ Ջիվանշիրը։ Վերջինս տերն էր միայն Դարգմանքի[42], բայց վերահսկում էր նաև անդրկուրյան տարածքի բնակիչներին[43]։

Կա պատմիչի մի ընդհանրացնող դիտողությունը։ Ըստ այս դիտողության երկրի հայազուններին խառնվել է պարսից Միհրանյաններից մի շառավիղ (Առանշահիկ Սահլի որդի Ատրներսեհն ամուսնացել է Միհրանյան տոհմից մնացած միակ աղջիկ Սպարամի հետ)։ Այս պատվաստից առաջացած իշխանությունն էլ շարունակել է տեր մնալ Աղվանքում. «Ստուգաբանությամբ այսպէս ծանեաք,— գրում է շարահարողը,— ընդ Հայկազնեայց արանդ խնամաւորիլ Միհրական տոհմին, և պատուաստութեամբս այսուիկ զոյգ ունել զպետութիւն Արևելից կողմանցս Աղուանից»[44]։

Ուրեմն, մինչև Միհրանյանների Դարդման գալը, աջափնյակի տերերը եղել են միայն Առանի հաջորդները։ Նրանք նախարարներ էին մարզպանության ստեղծումից առաջ։ Մարզպանության ներսում Առանշահիկ իշխանաղուն Վաչագանն ստեղծեց թագավորություն, որը գոյատևեց մինչև Համամ Բարեպաշտի թագավորությունը, սրան հաջորդած Խաչենի իշխանությունը Ի հետագաները։

Ցուցակի մյուս անուններից աղբյուրների օգնությամբ կարողացանք պարզել միայն Վաչագան Քաջի, Ուռնայրի և Արսվաղենի ինքնությունը։

36 Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 230։
37 Նույն տեղում, էջ 60։
38 Նույն տեղում, էջ 57։
39 Նույն տեղում, էջ 98։
10 Նույն տեղում, էջ 103։
41 Նույն տեղում, էջ 66, 67, 85։
42 Նույն տեղում, էջ 208։
43 Նույն տեղում, էջ 209։
44 Նույն տեղում, էջ 386։

Սրանք եղել են միասնական Ալբանիայի թագավորական տան ներկայացուցիչները։

Հայ մատենագիրներից առաջինն Ագաթանգեղոսն է, որ խոսում է Ալբանիա-Աղվանքում թագավորական տներ հիմնելու հանգամանքների մասին։ Նրա պատմության հունական օրինակում պահպանված մի հատված, որ հին, լիակատար բնագրից է մնացել, այսպես է ներկայացնում պարթև Արշակունիների ճյուղագրությունը. «Պարթևք՝ իբրև դէպք ի բարի յաջողէին նոցա, զթագաւորութիւն Պարսից, զՀայոց և զՀնդկաց՝ որ սահմանակից են արևելեայ Պարսից, նա և զխստալուծ զազգն Մազքթաց յինքեանս կորզեալ ժառանգէին, այսպիսի իմն կարգաւ. երիցագոյնն ի Պարթևաց տոհմէ, որ ապա զԱրշակունի ընկալան անուն, հասակաւ և արութեամբ շքեղ, գէր ի վերոյ քան զայլս երևեալ, նա կալաւ զիշխանութիւն արքայութեանն Պարսից։ Եւ որ երկրորդն էր զ.ինի նորա, զՀայաստանեայց առնոյր յինքն զթագաւորութիւն. իսկ որ երրորդն էր՝ զՀնդկացն կալաւ զտերութիւն, զհպատրն սահմանաց Պարսից։ Իսկ չորրորդն ի նոցանէ՝ զՄազքթացն ընկալաւ զիշխանութիւն թագաւորութեան»[45]։

Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկությունը հաստատվում է հունա-հռոմեական այնպիսի հեղինակի վկայությամբ, որն այս դեպքերի ժամանակակիցն է, որոշ առումով նույնիսկ ականատեսը։ Դա հռոմեացի Կոռնելիոս Տակիտոսն է (55—120), որը ոչ միայն խոշոր պատմաբան ու աշխարհագետ էր, այլև Հռոմեական կայսրության մեջ զբաղեցնում էր Ասիական շրջանի պրոկոնսուլի պաշտոնը։

Տակիտոսը պատմում է պարթև Արշակունի Վաղարշի (Վոլոգեզ) գործադրած ջանքերը՝ ի նպաստ իր գահակից եղբայրների գլուխներն արքայական թագերով զարդարելուն։ Սա միայն եղբայրներին արքաներ դարձած տեսնելու ցանկությունից չէր։ Չնայած դա ևս չի կարելի երկրորդական խնդիր համարել, քանի որ ինքն այլևս ազատ կլիներ գահակից եղբայրների հավակնություններից։ Հզոր պարթև արքան ուզում էր հարևան տերությունների միասնական-բարեկամական կապերի միջոցով իր հայրենի Պարսկաստանն անխոցելի դարձնել հյուսիսային ու արևմտյան կողմերից։

Վաղարշ-Վոլոգեզն ասում է. «Տրդատը՝ ծնված այն հորից, որից և ինքս, լինելով տարիքով ինձնից փոքր, առաջնությունը զիջեց ինձ, և ես նրան տվի Հայոց թագավորությունը, որը մեր տոհմի մեջ համարվում է տիրակալության երրորդ աստիճանը, քանի որ մարաստանցիներին դրանից առաջ իր ձեռքի տակ էր առել՝ Պակորը» (Բակուր)[46]։

Տակիտոսը հին ըմբռնումով է խոսում Բակուրի երկրի մասին։ Այս ժամանակ Պարսկաստանի հյուսիսային մասն այլևս Մարաստան չէր, այլ կոչվում էր Ատրպատական (մ. թ. ա. IV դ. պարսից կողմից այնտեղ կուսակալ կարգված Ատրոպատի անունից)։ Ագաթանգեղոսն էլ Տակիտոսի «մարերին» «հնդիկներ» է կոչում։ Սակայն սա քննվող հարցի համար երկրորդական նշանակություն ունի։ Ագաթանգեղոսի մոտ Վաղարշի երրորդ կամ կրտսերագույն եղբայրը թագավոր է մասքթաց աշխարհում, որն Ալբանիա երկրի հյուսիս-արևելյան մասն էր, ծովամերձ շրջանները՝ Զողից սկսած։ Սա էր, որ, ալբա-

---

[45] Գ. Զարպհանալեան, Պատմութիւն հայ հին դպրութեան, Վենետիկ, 1932, էջ 212։
[46] К. Тацит, Сочинения, т. I, Ленинград. 1969, стр. 281 (кн. 15, § 2).

նական ցեղերի միությունն առնելով իր տիրապետության տակ, հիմնադրեց մասքթաց կամ ալբանական Արշակունի թագավորությունը։

Թագավորացանկում Վաչագան Քաջը համարվում է Արշակունի և ընդմիջումից հետո հաջորդում է Առանին. «Եւ թիւ աւուրցն յԱռանայ մինչև զՔաջն Վաչական, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց՝ չէ յայտ»։ Հեղինակն ուզում է ասել՝ Վաչագան Քաջն առաջին Արշակունին է իր ցանկի մեջ։ Եթե այդպես է, ուրեմն՝ սա պետք է լիներ պարսից թագավոր Վաղարշակ Ա-ի և հայ Արշակունաց հարստության հիմնադիր Տրդատի (թագավորեց 66 թ.) կրտսեր եղբայրը, որ «զմագրթացն ընկալաւ զիշխանութիւն թագաւորութեան» (Ագաթանգեղոս)։ Այս պարագային իրավացի է Աղվանքի պատմիչը, երբ համոզված է, որ Առանից (II դ. մ. թ. ա.) մինչև Քաջ Վաչագանն ընկած ժամանակաշրջանում ուրիշներն էլ են եղել։ Սակայն ճիշտ չէ, երբ մասքթաց (ալբանական) թագավորին ու Մեծ Հայքի արևելյան նահանգների կուսակալ Առանին դնում է միևնույն շարքի մեջ։

Որ Ալբանիայի (մասքթաց) միասնական թագավորության ներկայացուցիչներն իսկապես եղել են Արշակունի և ցեղակից հայ Արշակունիներին, դա հաստատվում է նաև Փավստոսի հանդամանալից տեղեկություններով։ Մ. թ. IV դ. առաջին կեսին մասքթաց թագավոր Սանեսանն իր տիրապետության տակ ուներ անդրկուրյան երկրի (Ալբանիայի) բոլոր ցեղերին, և երբ հայոց դեմ մղած հակատամարտում ընկավ, Խոսրովը հանձին նրա՝ ճանաչեց իր ազգակցին՝ պարթև Արշակունի հինավուրց տոհմի ներկայացուցչին[48]։

Ահա Բուզանդի Պատմության այդ հատվածը. «Յայնմ ժամանակի թագաւորն մագրթաց Սանեսան անհնարին նիրթեաց զսրտմտութիւն ոխութեան ընդ իւրում սղգակցին Խոսրովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց, և Փոխաց, Թաւասպտրաց, Հեճմատակաց, Իժմախաց. Գաթաց և Գղուտրաց, Գուղարաց (կարդալ՝ Գարդարաց.— Ու. Բ.), Շչրաց և Ճղրաց, և Բաղասճաց և Եդերսուանացն և այլոց խառնաղանճ բազմութեամբ անթիւ անրնակ վաչկատուն զօրութեանց, որում միանդամայն ինքն իշխէր զօրացն բազմաց։ Եկն անց ըստ իւր սահմանն ընդ դետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ դերկիրն Հայոց աշխարհին»[49]։

Սույն պատմությունը մտել է նաև Խորենացու գրքի մեջ՝ փոքր ինչ այլ խմբագրությամբ։ Սեզ առավել հավաստի է թվում Բուզանդի պատումը, որովհետև նրա հաղորդած մանրամասներն ստուգելի են ու ճշգրտվում են վերոհիշյալ աղբյուրներով։ Բուզանդը ցույց է տալիս Սանեսանի զորանիստը, որը նաև նրա աթոռանիստն է եղել, և դա համապատասխանում է երկրի մայրաքաղաք Ջողին։ Ապա Գրիգորիսի նահատակության վայր Վատնյա[50] դաշտը,

---

47 Կաղանկատուացի, էջ 51։

48 Վ. Ֆ. Մինորսկին, Փավստոսի ու Խորենացու՝ Սանեսան-Սանատրուկին վերաբերող հատվածներից ենթադրել է, թե «հայ Արշակունի Սանեսանը իր համար ձեռք գրեց մի թագավորություն Կուրից հյուսիս, Կասպից ծովի մոտ (այն շրջանում, որ հետո կոչվել է Մասքուտ) և հակադրվեց իր եղբորը (կամ ազգականին)՝ Հայաստանի թագավոր Խոսրովին՝ (316—325)». տե՛ս նրա «История Ширвана и Дербенда», էջ 37։

Ինչպես վերը տեսանք, Սանեսանը Հայաստանի հետ կապ չուներ, իսկ Խոսրով Դ թագավորն էլ դահակալել է ոչ թե 316—325 թթ., այլ 330—338 թթ.։

49 Փ. Բուզանդ, Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1913, էջ 24.

50 Վատնյա դաշտ—վատն ցեղի անունից է. այդ ցեղի աղղաղավառի դաշտը։

որը Զողի մոտ էր, նրանից հարավ։ Թվարկում է Սանեսանին հպատակ ցեղերը, և դրանք բոլորն էլ ալբանական միության բաղկացուցիչներն էին։ Ցույց է տալիս Սանեսանի երկրի հարավային սահմանը, որ Կուր գետն է։ Եվ երբ այսքանից առաջ ասել էր[51] ու այսքանից հետո էլ կրկնում է, թե Սանեսանը մասքթաց Արշակունի թագավորներից է[52], մեզ այլևս ոչինչ չի մնում, քան հավատալ, որ խոսքն I դ. պարթևներից սերված այն տոհմի մասին է, որը եկավ Ալբանիա, դարձավ նրա տարալեզու ցեղերի գլխավորը և իր տիրապետությունը պահեց մինչև մարզպանական շրջանը։

Ալբանական (մասքթաց) մյուս Արշակունի թագավորը, որի մասին հայկական աղբյուրները (Կորյուն, Խորենացի, ապա Կաղանկատվացի և այլք) պահպանել են որոշակի վկայություններ, ինչպես տեսանք, Արսվաղենն է, որով և սպառվում է մասքթաց Արշակունիների թագավորությունը։

Ամփոփելով Աղվանից աշխարհի պատմության մեջ տեղ գտած թագավորացանկի քննությունը, եզրակացնենք, որ այս ցանկի մեջ միևնույն շարքում թվարկված թագավորներն ու իշխաններն իրականում բոլորովին էլ միևնույն երկրի տերերը չեն եղել։ Այստեղից.

ա) Աղվանից աշխարհի պատմության նկարագրած իշխողներն են եղել Առանը, Վաչագան Բարեպաշտը և վերջինիս հաջորդած Առանշահիկներն ու Միհրանյանները։

բ) Վաչագան Քաջը, Սանեսանը. Ուռնայրը և Եսվաղենը թագավորել են անդրկուրյան Աղվանքում (Ալբանիա)։

գ) Առաջին ու երկրորդ Վաչեների, Վաչագան երկրորդի, Մրհավանի, Սատոյի ու Ասայի մասին ոչինչ ասել հնարավոր չէ, քանի որ նրանց մասին ուրիշ ոչ մի տեղեկություն հայտնի չէ։ Պարզ է միայն մի բան՝ նրանք Աղվանից աշխարհի պատմության նկարագրած միջավայրի տերերը չեն եղել, որովհետև թագավորներ են հայտարարված այնպիսի ժամանակների համար, երբ այս միջավայրում իշխողներն Առանշահիկ իշխաններն էին։

Արդ. ե՞րբ և ի՞նչ նպատակով է կազմվել մեր քննության առած ցանկը։

Նիկ.Ադոնցը գտնում էր, որ Աղվանից աշխարհի համահավաք պատմություն ստեղծելու շարժառիթ են հանդիսացել X դ. հայոց կյանքում ծայր առած կենտրոնախույս տրամադրությունները։ «Մովսես Կաղանկատվացին կազմել է իր Պատմությունը գրեթե նույն ժամանակ, ինչ Հովհաննես կաթողիկոս և Թովմա Արծրունի, X դ. առաջին կեսին, այսպես ասած՝ հատվածական կամ տեղական հայրենասիրության շրջանին. Հովհաննես կաթողիկոսը գրել է Բագրատունիների պատմությունը, Թովման՝ Արծրունիների, Կաղանկատվացին նրանց հետևելով՝ Աղվանից կամ Արցախի իշխանների։ Մերձավոր առիթն է, հավանորեն, Աղվանից իշխանի՝ Սահակ Սևադա զորավոր իշխանի՝ իր որդի Գրիգորի հետ ճակատիլը Սմբատ և Աշոտ Երկաթի դեմ և կարողանալը պաշտպանել իր անկախությունը, և Գրիգորի որդուն՝ Սևադա Բ. Իշխանիկի տրքայական թագ կապելը...»[53]։

Ականավոր գիտնականն իրավացի է։ Դրա ապացույցն է այն խանդավառ բավականությունը, որով հեղինակը Սահակ Սևադայի անջատողական դոր-

51 Բուդանդ, գպր. երրորդ, գլ. Զ։

52 Նույն տեղում, գլ. է։

53 Ն. Ադոնց, Խորենացիական հարցն ու հ. Վարդան Հացունի (տե՛ս «Անահիտ», 1948, № 1—3, էջ 86—87).

ծունեությունն է նկարագրում կամ նրա թոռ Հովհաննես-Սենեքերիմի թագադրության փաստը։ Դասխուրանցին (Կաղանկատվացի) իսկապես կազմել է (ոչ թե գրել) այս պատմությունը՝ ի մի հավաքելով V—X դդ. հյուսված ժամանակագրություններն ու բազմահարուստ նյութերը։ Թագավորացանկը նրա համար մի երջանիկ գյուտ է եղել՝ ցույց տալու համար իր երկրի իշխանական տոհմի փառավոր ակունքները։

Ցանկի վրա կարելի է տեսնել այն կազմելու ժամանակի դրոշմը։ Ցանկը նախորդում է Վաչագան Բարեպաշտին վերաբերող պատումին։ Պատումի հերոսինակը ցանկի անունները թվարկելուց հետո հիշատակում է նաև Վաչագանին և նրան բնութագրում այսպես. «Սակայն ոչ ումեք ի նոցանէ (թվարկվածներից.— Ռ. Բ.) այսպիսի աստուածային և հոգևոր ծածկեալ գանձ յայտնեալ ընձեռեցաւ՝ որպէս վերջինս Վաչականայ Բարեպաշտ Աղուանից արքայի»[54]։

Այստեղից երևում է, որ ցանկը կազմվել է Վաչագանի ժամանակագրի ձեռքով։ Առանձնահատուկ թագավորության հիմնադրի մասին պատմողը, այդ թագավորության հետ կապելով իր հայրենիքի ազատության ու ծաղկումի հույսերը, միաժամանակ փորձում է զարգարել նրա տոհմաբանությունը՝ ակունքի մոտ գնելով Արշակունիներին, նույնիսկ Սասանյաններին[55]։ X դ. շարահյուսի տրամադրությանը շատ համահնչուն է եղել այս ցանկն իր անիրական ու իրական հիմքերով։

Դասխուրանցու տեսած Աղվանքն Արցախն էր՝ հարևան Ուտիքի մի շարք գավառներով հանդերձ։ Այստեղ էր գտնվում նաև հոգևոր կենտրոնը. Արցախի Մեծառանք գավառի Բերգակոր ավանն էր կաթողիկոսանիստը[56]։ Դասխուրանցին մի արտակարգ ծաղումնաբանություն է հորինում նաև այս կաթողիկոսության համար։ Նա 552 թ. Պարտավում հիմնադրված կաթողիկոսության ոկիդրը տանում է առաջին դարը, և պնդում, թե, իբր, այն ժամանակ Ջողում հիմնադրված կաթողիկոսությունից պիտի հաշվել Աղվանքի հոգևոր նվիրապետությունը։ Եվ, որքան էլ տարօրինակ, նա այս կաթողիկոսության հիմնադիր համարում է մեկ՝ Եղիշե առաքյալին, մեկ էլ Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսին, որը, ինչքան հայտնի է հենց պատմիչի վկայակոչած աղբյուրներից, հիմնել է միայն եպիսկոպոսություն, ապա՝ նրա աթոռը գտնվում էր ոչ թե Ջողում, այլ Արցախի Հարանդ գավառի Ամարաս ավանում, որտեղ և այն մնաց մինչև 552 թ.՝ Պարտավում կաթողիկոսություն ստեղծելը։

Ահա այս է պատմական իրականությունը։ Մինչդեռ պատմիչին անհրաժեշտ էր իր երկրամասը բարձրացնել, ցույց տալ նրա առանձնահատուկ ու արտաստվոր արժանիքները։

Այս ամենի հետ միասին հնարավոր է նաև, որ Դասխուրանցուն իր պատմության մեջ այդպիսի ցուցակ մուծելու է մղել Աղվանքի եկեղեցու վիճակը։ Եվ այս բոլորից դրդված՝ Աղվանից աշխարհի պատմության շարահարողը ղեկավարվել է «Աղվանք» անվան հետ կապված հին ու նոր բոլոր փաստերն ու տեղեկությունները մի տեղ ժողովելու սկզբունքով։ Մասամբ թյուրիմացությամբ, մասամբ (թերևս՝ ավելի շատ) պարզապես իր հայրենիքի պատմությունը շքեղ հյուսելու դիտավորությամբ, նա հավաքել ու միևնույն «Աղվանք»

54 Կաղանկատուացի, էջ 51։
55 Նույն տեղում, էջ 57։
56 Նույն տեղում, էջ 394։

անվան տակ է դրել այն բոլոր տեղեկությունները, որոնք հինավուրց աղբյուրներում կային ու վերաբերում էին միայն անդրկուրյան Աղվանքին, և ավելի ուշ շրջանի տեղեկությունները, որոնց մեջ «Աղվանք» նշանակում էր բացառապես Կուրի աջափնյակը։ Հետևանքն այն է եղել, որ մի շարքի մեջ են մտել ձախափնյակի հին ալբանական կամ մասքութ-Արշակունի թագավորները և աջափնյակի Առանշահիկ իշխանական-թագավորական տան ներկայացուցիչները։

К ВОПРОСУ О ЦАРСКОЙ ДИНАСТИИ АГВАНКА

Б. А. УЛУБАБЯН

Резюме

Автор окончательного текста «История страны Агванк», с целью установления генеалогии владетелей страны, включил в свою книгу следующий список:

«...Аран был назначен правителем Агванка. Неизвестно число дней от Арана до храброго Вачагана, который происходил из великого рода Аршакидов. Вот имена царей, владевших Агванком в порядке: Храбрый Вачаган, Ваче, Урнайр, Вачаган (второй), Мирхаван, Сато, Асай, Есваген, Ваче, после него Благочестивый Вачаган, царь Агванка».

В дальнейшем этот список был принят историографами и историками-исследователями, как достоверный документ, перечисляющий имена царей Агванка.

Данный список впервые обсуждается на основе первоисточников, в результате чего удается придти к выводу, что носители имен, перечисленных в данном списке, отнюдь не являлись представителями одной и той же династии или царями одной и той же страны.

Вачаган Храбрый, не вошедший в список царей Агванка Санесан, Урнайр, Есваген, по утверждению источников, были царями собственно Агванка и представляли Албанскую (массагетскую) ветвь династии Аршакуни. А Ар'ан и его преемники (в списке—Благочестивый Вачаган), не имеющие ничего общего с династией Аршакуни, являлись наместниками и нахарарами Арцаха и Утика, представляя Ар'аншахикскую династию.